



Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԳԼՈՒԽՐԻ ՄԸՆԹՑՆԿՅՐՉՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԵԳԻՐ ՎԱՐՊԵՏ ՄՈՄԻԿԸ

Խոր են հայկական մշակույթի ակունքները: Նրանք ծագում են վաղ անցյալից, մեր թվարկությունից առաջ գոյություն ունեցած ժամանակաշրջանից: Խակական պլուստործոցներ հանդիսացող արվեստի շատ հուշարձաններ վկայում են հին Հայաստանի գեղարվեստական բարձր մշակույթի և հայ ժողովրդի ստեղծագործական մեծ ճիրքերի մասին, ուղղվուրդ, որն այդ հուշարձաններն ստեղծելով համաշխարհային արվեստի պատմության մեջ փառահեղ է չեղք:

Հին Հայաստանի արվեստներից պահպանվել են մոնումենտալ ճարտարապետության հրաշալի հուշարձաններ: Ճարտարապետական ձևերի արտակարգ հարստությունը բացահայտում է հայկական ճարտարապետության բուռն ծաղկման մասին, որը հշակել է իր ինքնատիպ և յուրօրինակ գեղարվեստական ոճը:

Դեկորատիվ (գեղազարդական) արվեստից նույնպես մնացել են բազմաթիվ հուշարձաններ՝ փորագրություններ բարի և փայտի վրա, որոնք աշքի և բնինում բարձր գեղարվեստականությամբ են կատարուի բացարձությամբ:

Ստեղծվել են կարես գեղարվեստական արժեքներ և գեղանկարչական արվեստի բնագավառում, որտեղ առաջնակարգ նշանակություն է ձեռք բերել մանրանկարչու-

թյունը: Ճարտարապետության և միասին մանրանկարչությունը դարձել է ստեղծագործական այն բնագավառը, որտեղ հայ ժողովրդին իր ուժերը դրսուրել է առավել լիակատարությամբ ու ամրողականությամբ, մշակութային ժառանգության ոչ մի բնագավառ չի պահպանվել այնպիսի ճոխությամբ ու բազմազանությամբ, ինչպես հին հայկական մանրանկարչությունը:

Դրշագրերի և մանրանկարչության արվեստը հանդիսանում է ինքնուրուցին ուսումնասիրության առարկա: Բայց միենույն ժամանակ մանրանկարչության ուսումնասիրությունը կարևոր է միջնադարի հայկական գեղանկարչության մասին զատողությունների համար, քանի որ գեղանկարչության այլ տեսակներ, մասնավորպես զագդահային գեղանկարչության, Հայաստանում չեն պահպանվել, իսկ որմանկարչությունը հասել է մեզ համեմատաբար սահմանափակ քանակությամբ: Մանրանկարչությունը ու ձեռագրերի զարդարումը բավական նյութ է առաջին պատմությանը, հնագիտությանը, ազգագրությանը, թատրոնագիտությանը և այլ բնագավառների:

Մանրանկարչության ստեղծումը Հայաստանում կապված է գիսավորապես գրչության արվեստի զարգացման հետ: Ավելի քան 25.000 հայկական ձեռագրեր են պահպատավման աշխարհի տարրեր բաղաբներում: Զերագրերի ամենամեծ հավաքածուն կենտրո-

նացված է Երևանում: Դրանք հավաքված են Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական ձեռագրատանը (Մատենադարանում): Այնուամենայնիվ, հայկական մանրանկարչությունն ու ձեռագրի գրչության արվեստը դեռևս բավարար չեն ուսումնասիրված: Մանրանկարչական շատ դպրոցներ ինչպես և վրձինի շատ վարպետների ստեղծագործություններ զերև չեն արժանացել իրենց գործական գնահատությանը: Մանրանկարչության ուսումնասիրությունը և հետազոտողների կարևորագույն խնդիրն է հանդիսանում մանրանկարչական առանձին դպրոցների նշանակության պարզաբանումը և այդ դպրոցների ասավել աշբի ընկող ներկայացնեցիների ստեղծագործության բազմակողմանի ուսումնասիրությունը: Միայն այս ձեռվ Շարագոր է ստեղծել հայկական մանրանկարչական ամբողջական պատմությունը:

Ներկա հոդվածում լուսաբանվում է միջնադարյան Հայաստանի տաղանդավոր վարպետներից մենքի՝ հանրահայտնի Գևաճորյան մանրանկարչական դպրոցի հիմնադիր նկարից Մոմիկի ստեղծագործությունը:



Մոմիկ վարդպետը¹ բազմակողմանի վարպետ է նաև հ' գրի է, հ' նկարի, ինչպես և բանգակող, իսկ իրեն հավատանք ին ավանդության, նա եղել է նաև ճարտարապետ²: Այս նկարչի նշանակությունն ու փերը ոչ միայն չի պնահատված, այլև բոլորովին չի հետազոտված հատուկ արվեստագիտական գրականության մեջ, թիե նրա անունը հիշվում է մի շաբթ աշխատառությունների մեջ: Որպես քանդակագործական աշխատանքների և խաչքարերի հեղինակ, Վայոց Զորի ստամական վիճակական հուշարձանների հապակցությամբ Մոմիկը հիշատակվում է մի

1. Այդպես էր անվանվում նկարիչ Մոմիկը իր գործունեության վերջին շրջանում «Վարդպետ» ծագում և «վարդպակեա» բառից, որը 13—14-րդ դարերում նշանակում էր «վարդպակեա» (Տե՛ս Կարս Պաֆադարյան, «Ավանին երկեղովյան ծածկագիր» արձանագրությունը, Երևան, 1951 թ., էջ 12):

2. Տե՛ս Հ. Մկրտչյան, «Խոմելիներ և ակնարկներ», Երևան, 1947 թ., էջ 81—84: Ա. Բարխուսէարյանի «Ետագոտության համաձայն», «Վարդպետ» նշանակում է անարտարապետ, որը հասատում է Մոմիկի ժամկի գոյություն ունեցող ավանդության պատմական հիմքը ունի Ս. Բարխուսյան, «Средневековые армянские архитекторы и мастера по камкую (автореферат диссертации), Ереван, 1952, стр. 5—8):

շաբթ պատմիչների մոտեն Մոմիկը որպես մանրանկարիչ հիշատակվում է Գարեգին Շովանիանի մոտ, նրա «Գրչության արվեստը» հայոց մեջը աշխատության մեջ՝ նրա մասին հիշվում է նաև Գարեգին Լենյանի «Հայ գիրքը և տպագրության արվեստը» աշխատության մեջ, որտեղ հեղինակը ցույց է տալիս, որ 13-րդ դարում Սյունիքում ձեռագրերի գեղարվեստական ձևավորման ու նկարագրման զորում հանրահոչակ փառք էր վաստակել նկարիչ և փորագրող Մոմիկը:
Մական պետք է նշել, որ այստեղ Գ. Առնյանը սիսամիւմ է այս վարպետի գործունեության ժամանակաշրջանը սահմանափակելով միայն 13-րդ դարով այն գեպեռում, եթե նրա ստեղծագործությունն ընդգրկում է հաջորդ դարի արկու տասնամյակները: Այդպիսի անձագություն է թույլ տալիս և եւ բասմաշյանը, Մոմիկի գործունեությունը սահմանափակելով միայն 14-րդ դարի սկզբում:³

Նկարիչ Մոմիկի բազմակողմանի ստեղծագործությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն Գևաճորյան մանրանկարչության դպրոցի պատմության համար, այլ նաև Կիլիկյան Հայաստանի 13-րդ դարի վերջի և 14-րդ դարի սկզբի ձեռագրերի նկարագրման պատմության համար: Մոմիկը որպես նկարիչ յուրացրել է Կիլիկիայի վարպետների փորձը, և իր հերթին ինքն էլ նշանակալից ազգեցություն է թողել 14-րդ դարի Կիլիկյան արվեստի նոր ուղղության հետագա զարգացման վրա:

Նկարիչ Մոմիկի կինսագրությունը, ինչպես միջնադարյան հայկական արվեստի մի շաբթ վարպետների հյանքը, ցավոր սրտի, թիւ և հայոնի մեջ: Ո՞րտեղից է նա ծագմածը, որո՞նք ին եղել նրա ծնողները, ո՞րտեղ և ո՞ւմ մոտ է սովորել, այս հարցերին սկզբնաղբյուրները պատասխան չեն տալիս:

Առաջին անգամ Մոմիկի անունը հանդիպում ենք 1283—1284 թվականների մի ձեռագիր հավաքածուի մեջ, հիմնականում գրված Մատթեոս Կիլիկիցի գրչի դեռուվ Աղ-

3. Տե՛ս Դ. Ալիշան, «Սիսական, տեղագրություն Միւնեաց աշխարհի», Վանեամիկ, 1893 թ., էջ 182, 1951—4. Պաֆադարյան, «Ավանին երկեղովյան ծածկագիր» արձանագրությունը, էջ 11—12:

4. Գարեգին Հովհանիսյան, «Գրչության արվեստը» հին հայոց մեջը, մասն Գւ—«Թարտեղ հայ հավաքության» (Հայ գրի գյուտի 1500-ամյակի առթիվ), Վահարշապատ, 1913 թ., էջ 41:

5. Գարեգին Լևոնյան, «Հայ գիրքը և տպագրության արվեստը», Երևան, 1946 թ., էջ 34:

6. Տե՛ս Հ. Հ. Բասմաշյան, «Հայոց հին գեղարվեստի վարպետները», Փարիզ, 1926 թ., էջ 22:

սերց վանքում, այսինքն Թլածորում, ներս Սշեցի վարդապետի պատվիրով⁷, Այդ ձեռագրում կան Մոմիկի ձեռքով նկարված խորաններ, որոնցից մեկի վրա (24ա էջում) կա հիշատակություն, զրված նկարչի սիփական ձեռքով՝ «ԶՄոմիկ նկարիչ խորանի յիշեցէ աղաւեմ»:

1283 թվականին նկարիչ Մոմիկը Կիլիկիայում հայ թագուհի Կեռանի համար նկարագրել է մի ձեռագիր ափետարան:

Արդյոք Մոմիկը կիլիկիցի⁸ է եղել, թի եկել է Կիլիկիան Հայաստան կատարելագործվելու, տեղական գեղարվեստական դպրոցների և նրանց վարպետների արվեստին ծանոթանալու նպատակով— նյութերի ու տվյալների բացակայության պատճառով գժվար է որոշակի որևէ բան ասել: Բայց պարզ է մի բան, որ այս նկարիչը զուրս է Կիլիկիա Գլածորից⁹, իր հեղինակությունն ստացել է Կիլիկիայում, որտեղ կատարելով թագուհի Կեռանի պատվիրները, լայն անհաշում է ձեռք բերել Հետագայում նկարիչ Մոմիկի ստեղծագործական գործառնությունն անցել է Վայոց Չորի սահմաններում, որտեղ նա երկար տարիներ աշխատել է Թանատ-Գլածորում, Նորավանքում, Արփայում և այլ տեղերում և ստեղծել է մի շարք բարձրարվեստ գրչական և քանդակագործական հուշարձաններ, ինչպես նաև հրաշագիդ խաչքարեր:

Զեռագիր և վիճակիր աղբյուրների վկայության համաձայն նկարիչ Մոմիկի բնագավոր գործունեությունը տևել է գրեթե 40 տարի, սկսած 1283 թվականից մինչև 1321 թվականը, Անկասկած, այդ տարիների ընթացքում նա ստեղծել է մեծ թվով մանրանկարչական աշխատավայրերում համապատասխան աշխատանքներ, որոնց մի մասը ոչնչացել է ժամանակի ավերիչ ձեռքով, մի մասն էլ դեռևս անհայտ է: Մոմիկից մեզ հասել են բավականաշատ թվով ձեռագիր հուշարձաններ: Սուրբ բերքած շորս ձեռագրերից անվերապահներն առաջնային երեք առաջնային առաջնային առաջնային երեքը պատկանում Պն նրան, իսկ շորրորդը, ինչպես ենթադրում ենք, նույնպես պատկանում է Մոմիկին. այդ ձեռագրերն են.

7. Տե՛ս Հ. Հ. Տաշտան, «Ծույցակ հայերէն ձեռագրաց ժամանակաբանին Մխիթարեանց ի Վիեննա», Վիեննա, 1895 թ., էջ 1039.— Ցանկը սրտի, նարազոր չէ որևէ բան տակ նկարիչ Մոմիկի այդ աշխատանքի մասին, բանի որ այն պահպան է Վիեննայում, Մխիթարյանների մոտ:

8. Տե՛ս Կ. Կուտայնի, «Из истории древней армянской литературы XIII—XIV вв., отпечатанной в сборнике, посвященном А. Н. Веселовскому», М. 1914 г., стр. 8.

1. Հավաքածո (1283—1284 թ. թ.)¹⁰.

2. Ավիտարան, 1292 թ. (Մատենադարան, ձեռ. № 2848).

3. Ավիտարան, 1283 թ. (Մատենադարան, ձեռ. № 6764):

4. Ավիտարան, 1302 թ. (Մատենադարան, ձեռ. № 6792).

Նկարիչ Մոմիկի բանկակագործական աշխատանքներից որոշակի հաստատված են խաչքարը Նորավանքում (1308 թ.) և Հիսուս Մանկան հետ միասին Աստվածամոր պատկերի վերաբարպետիոնը Արփագուղի եկեղեցու մուտքի վերերի բարի (տիմպանի) վրա (1321 թ.):

Վերը հիշված ձեռագրերից կանգ կառնենք 1302 թվականի ավետարանի վրա: Այդ ձեռագրի մեջ առավել ցայտուն կերպով նկարչի ստեղծագործության առանձնաշատկությունները և այդ ձեռագրերը հանդիսանում է ոչ միայն Մոմիկի լավագույն ստեղծագործություններից մեկը, այլև ամրության մարածակարշամբան դպրոցի:

1302 թվականի ավետարանը, կամ ինչպես առաջարկում ենք այն անվանել «Մտենիանոս Օրբելյանի ավետարան»-ը, մինչեւ աշխատ ոչ որի կողմից չի ուսումնասիրված: Հիշատակարանից պարզվում է, որ այն լրացվել է, ավելի ճիշտ վերականգնված է եղել 1406 թվականին ուն Գրիգորի կողմից: Զեռագրի մեծ մասը գրված է մագաղաթի վրա, լրացված մասը՝ բամբակի թղթի վրա: Ճին, մագաղաթյա մասի գրից եղել է Հովհաննես Օրբելյանը՝ հետապայում Մյունիքի եպիսկոպոսը: Խակ պատմիրատուն եղել է ամրող Սյունիքի արքեպիսկոպոս, Հայտնի պատմաբան Ստենիանոս Օրբելյանը, որին էլ ձոնված է եղել ձեռագրերը. այստեղից էլ մենք վերցրել ենք ավետարանի նոր անվանումը՝ «Մտենիանոս Օրբելյանի ավետարան»¹¹:

Ավետարանի ծափալը մեծ չէ (8,7×12 սմ.), բաղկացած է 300 էջից: Երկու տեքստերն էլ՝ «Մագաղաթի և թղթի վրա, գրված են շատ փոքր ու գեղեցիկ բոլորգորով և, չնայած փոքր շափսին, երկու սյունակով»:

Գրիգորի ձեռքով լրացված մասը չունի որևէ նկարազարդում և ի տարբերություն Հիմնական մասի, ավետարանի տեքստի

9. Պահպան է Վիեննայում (տե՛ս Հ. Հ. Տաշտան, «Ծույցակ հայերէն ձեռագրաց մանրանկարչանին Մխիթարեանց ի Վիեննա», էջ 1039):

10. Զեռագրի պատմիրատուի կամ առաջըլի անգամը կոչելը հաստատված տրադիցիա է եղել հին Հայաստանի գրչության արևեստի պատմության մեջ:

սկզբնատողերի գվագրերը գրված են կարմիր գույնով, իսկ մագաղաթի վրա գրված են սովորով:

Հետագա աշխատանքի ներմուծումը արձաթե բարձրաքանդակի վրա խաչված թրիստոսի պատկերն է, կողմի հակառակ կողմը տրված է Տիրամալրը Մանկան հետ, երկու որդերի մեջ առնված:

Նախքան նկարի Մոմիկի մանրանկարների թնությանն անցնելը, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այդ ձեռագրի մի ինքնատիպ կողմի վրա. ավետարանն սկսվում է ոչ թե առաջին ավետարանի Մատթեոսով, ինչպես ընդհանրապես ընդունված է, այլ ընդհակառակը, վերջին՝ Հովհաննես ավետարանինիցով: Զեռագրի ուշադրությունը ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հաստատել, որ այդպիսի տեղագրությունը վերականգնող կողմից է կատարված, քանի որ անմիջապես Հովհաննես ավետարանի վերջին տողերից հետո, հենց նույն էջում սկսվում է Մատթեոսի ավետարանը և շարունակվում է ընդունված կարգով: Նշանակում է այդ ձեռագրը բոլոր կողմերով մի ինքնատիպ և հազվագյուտ երեսով է ավետարանիների դրչության պատմության մեջ¹¹:

«Մտեփանոս Օքբելյանի ավետարան»-ը պարունակում է 12 սյուժետային մանրանկար. մեկը Հովհաննես ավետարանչի պատկերն է Պրոխորոսի և երկու առաքյաների հետ, Փետրոսի և Հակոբի պատկերը, երկու անվանաթերթ, ութը ուղղանկյուն գլխազարդ և մի շարք լուսանցագարդեր, որոնց մեջ երբեմն պատահում են առանձին նկարներ, ինչպես օրինակ արմավենի, զանգակատուն և այլն:

Այս ձեռագրի վրա նկարին աշխատել է, ինչպես ինքն է նշում հիշատակարանի 13-ր էջում, անրաբենապատ պայմաններում՝ «Աղաչիմ զհանդիպեալք այսմ աստուածարան տասիս յիշել զանիմաստ նկարոց Մոմիկ և մագաղանացն անմեղադիր լինել, զի թէպէտ անհմուտ էի, այլ ժամանակս ձմեռն էր և տոմս նսիմ, և Աստուած զիշշողս յիշէ յիւր անրաւ ողորմութիւնն, և նմա փառք յափեանս, ամէն: Ի թվիս ԶՄԱ»:

11. Այս հարցի հետազոտությունը առանձին հետաքրքրություն է ներկայացնում. այն լուս կսփոք ձեռագրի գաղափարական մեկնարանության հարցի վրա ներկա հոդվածի բնույթն ու ծավալը հնարավորություն չեն ընձեռում հանգամանորեն կանգ առնել այս հետաքրքրական հարցի պարզաբանման վրա: Այստեղ միայն մենք ցանկանում ենք հետազոտողների ուշադրությունը հրամիրել ձեռագրի այդ կողմի վրա:

Մոմիկը ձեռագրի մեջ զրւէ և ավետարանական այսպիս կոչված գլխավոր տաները՝ «Ավետումն», «Թրիստոսի Մնանդը», «Տյանընդառաջը», «Քրիստոսի Մկրտությունը», «Ալլակերպությունը», «Մուտք երուսաղեմ», «Ուտնալված», «Խաչելությունը», «Ողբ», «Քրիստոսի Հարությունն ու Հայտնությունը», «Համբարձումը» և «Հոգեգալուսար»: Բոլոր այս ավետարանական շարքի միջով կարմիր թելի նման անցնում է միասնական մասին միավոլք միացած ընդհանուր գաղափարը: Որոշ տեղերում, թվում է, թե բացակայում է սերս կապը այդ շարքի առանձին ողակների միջև: Այսպես, օրինակ, նկարից շի տվել «Խորհրդավոր գիշերը», «Հուզայի համբուլը», որոնք կարող են ընդգծել Ռոտնալվայի և Խաչելության պատկերների միջև եղած կապը Կարծում ենք, որ այդ տեսարանները Մոմիկը բաց է թողել կանխամտածված կերպով: Իրա համար, որպեսզի «սուրբ» համարված 12 թվանշանից դուրս չգտա: Այդ ավելի ակնհայտ է նրանով, որ բացի թուղթությամբ մտովի կարող է լրացվել նայողի կողմից, քանի որ Ռոտնալվայի և Խաչելության միջև պահպանված է մի շղթա՝ նրանք զուգահանություն և ունեն մի քանի տեղերում շիման կետեր: առաջին դեպքում թրիստոսն իր վրա է վերցնում աշակերտների մեղքերը, երկրորդ գեպքում՝ նա խաչված է մարդկային մեղքերի համար: Ռուեմն, կարմիր է առել, որ նկարի Մոմիկի մոտ շարքի ամեն մի հաջորդող օղակը բխում է նախորդից: Այսաեղից լլ հասկանալի է գառնում դեպքերի հաջորդական պատկերումը (նրանց ներքին օրինաշափությունների գրանորմամբ), որով և վերջին հաշվառ հետին շարքն են մովեց զարգերն ու դեկորատիվ նկարները: Ըստ որում, վերջինս էլ բացատրվում է նույնպես ձեռագրի շափերով¹²:

Այս շարքից մնանության առնենք առավել բնորոշ և հետաքրքիր լուծված մանրանկարները, որոնց մեջ ցայտուն կերպով արտացոլված են Գլաճորյան մանրանկարչության գարցոցի առանձնահատկություններն ու նվազագույնները:

«Ավետումն» (էջ 1ր, տե՛ս նկ. 1): Մանրանկարը պատկերում է «Հրեշտակի ավետումը կուսախ ըթի մոտ» տեսարանը, որտեղ Մարիամը ներկայացված է յուրօրինակ կամաւածե, զարդարված ճարտարապետական մի կոթողի առաջ կանգնած: Ճախ ձեռքում նա պահում է մի գավաթ, իսկ աչ ձեռքը զարմացած մեկնել է գեպի մոտեցող Գաբրիել Հրեշ-

12. Նկարի Մոմիկի այլ ձեռագրերը համեմատարար հարուստ են զարդային և այլ գեղագրագումներով:



Նկար 1.— Ավետումն

տակը: Առաջին պլանի վրա, կենտրոնում ոճավորված ժայռի առաջ կանգնած է մի մեծ սկանակ, որտեղ երկու ազրյուրից, որոնք շատ նման են կանացի ստիթիների (Համաձայն նկարի թափված կարմիր շերտի տակից երեացող պահպանված ուրվագծերի), թափվում է չուրբ: Կարելի է ենթադրել, որ նկարից խորհրդանշանական կերպով ներկայացրել է կյանքի ազրյուրը: Եվ իրոք, ժայռը, որից բխում է չուրբ, պահպարար անվանվել է «Թրիստոսի կենսատու ժայռ»¹³:

Այդ մանրանկարի պատկերագրությունը իր սխեմայով ծագում է այսպէս կոչված «Հակոռի սկզբնավետարան»-ից¹⁴, որի համաձայն Ավետումն աղբյուրի մոտ տեղի է ունեցել Մարիամի երուսաղեմի տաճարում և լուծ ժամանակ: Հնարավոր է, որ Մոմիկը ծանոթ է եղել այդ վերսիան պահպանող վարպետների դորձերին: Դրա համար էլ Մոմիկի մանրանկարի մեջ Մարիամից այն կողմ երեւում է «Երուսաղեմի տաճարը», և նա, որպես այն- տեղի «թափալորական աղջկա»-ներից մեկը

¹³ Տե՛ս Հ. Տ. Կոնդակօվ, «Իկոնոգրաֆիա ստում- տեր», СПԲ, 1914 թ., Տ. I, սր. 132

¹⁴ Նույն տեղում, էջ 246:

եկել է ազրյուրը ցրի: Մարիամը վեհա- պանծ ու գուսակ է, թեև զիմի փոքր ինչ հակ- փածությունը և աշքերի նայմածը հրեշտա- կին արտահայտում նն թեթև հուզմոնք և զարմանք երկնային առարյալի անսովոր ավելացման առթիվ:

Դեմքերի ու կերպարների արտահայտու- թյան մեջ նկարից ձգտել է դրոշմել արևել- յան բաւարության զծերը: Մարիամը ներ- կայացված է երիտասարդ հայուշու կերպա- րանուլ, նա ունի մեծ-մեծ աշքեր, թուխ զիմ- քի վրա բավկանին իրը այսօքը կարծրա- վուն են, բնոգծված են բարակ, նուրբ քիթը և փորբիկ բերանը: Նու ներկայացված է երի- տասարդ աղջկա տեսրով, չնայած ունի ա- մուսնացած կնոջ զգեստավորում՝ ծածկված է բացի մեջ, կամ մաֆորի և թերավոր զիմստուլ նրեւում է, որ մաֆորին բարակ զորվածքից է, մանր շերտերով ծածկելով մարմնի ամ- րուց վերին մասը՝ կուրծքն ու թեն- րու նրա ծայրերը զցված են ուսերից ու թեն- րից և կախված են ցած: Ընկնող կտորի մո- տիվը արտահայտված է ակնհայտորեն շո- շափելի կերպով: Հատկապես բնորոշ է մա- ֆորի նեղ երգադարդի զիմզագակերպ ձևերի կրկնությունը, կամ արագես կոշված սծիծեռ- նակի պոչերը՝ մարմնի երկու կողմից կաի- րնկած նրա ծայրերին: Ռիթմի բնույթը և նյութականությունը տրված են հաղուստի զծային ծագմանը, Մա- րիամը, չնայած որ իրենից ներկայացնում է մի հասարակ կնոջ կերպար, ինչպես այդ նկատվում է 4—5-րդ զարերի ժին արևելյան (կոպտական, սիրիական) սրբազնություն- ում և փեմանկարներում, համաձասնություն- ների խստությամբ, զծային ոիթմով մոտ է կանգնած կլասիկ բյուզանդական արվես- տին:

Մարիամի վրայի մաֆորին կատարված է շուշանագույն երանդով, իսկ ներքնազեխստը երկնագույն: Հրեշտակի զգեստը տրված է կինարախու զույնով: Հետաքրքրական է նշել, որ Մարիամի կոշիկների զույնը, որը ուրիշ նկարիների մոտ սովորաբար վառ ծիրանա- դույն է, այսաւել մուգ-կապույտ է, գորեթե սև:

«Քրիստոսի Մնունքը» (էջ 2-ա, տե՛ս նկ. 2): Զհետեղով ընդունված պահպանթյան, որին համեմ են շատ-շատ նկարիչներ, Մոմիկը այդ տեսքարանում տալիս է բոլորովմին նոր նորինվածքի սխեմա¹⁵: Ավանդության համա- ձայն, Տիրուայրը զրվել է հորինվածքի

¹⁵ Կամ կարող է պատահել, որ այդ հորինված- քի սխեմանը, ինչպես և մի բանի այլ տեսքարան- ներում, զալիս է վաղ անցյալից, չին արևելյան ավան- դություններից: Մեզ անձամբ նշան սխեմա հայտնի չէ:

կենտրոնական մասում՝ Նրան սովորաբար ներկայացրել են նորածնի մոտ պառկած, Երբեմն տրված է եղել և տաշտակ, որը պատրաստում են կանայք նորածնին՝ լողացնելու համար և մի շարք այլ մանրամասնություններ (Հրեշտակներ, մողեր, հովհանքներ), իսկ Հովսեփին ներկայացնում էին, սովորոթյան համաձայն, նաջելիս և ընդհանրապես առանձին, ներքի անկյուններից մի տեղ, կամ թե Տիրամոր ոտքերի տակ: Նկարիչ Մոմիկը նոր հորինվածք է տալիս: Ծննդյան տեսարանը, որ տրված է այսպես կոչված Վիֆլեմյան ժայռ-բարայրի ֆոնի վրա, ինքնատիպ է: Ծննդյան Մարիամի կերպարը (Նա այստեղ չի ննջում, գեմքին դրոշմված է մտահոգությունը և համակ տիսրությունը) տեղավորված է Հորինվածքի բուն կենարոնում, քարե օրորոցի մեջ՝ ուղիղ պառկած նորածնի վրա: Տեսարանի անկյունագիծ հատումը ցույց է տալիս, որ նկարիչը դիտակցորեն Աստվածամորը թողել է նրա սահմաններից դուրս, որպեսզի ավելի շատ ընդգծի Հովսեփի դերը



Սխեմա 1. — «Քրիստոսի Ծննդյան»
մանրանկարի կոմպոզիցիան

(սխեմա 1): Այսպիսի հորինվածքը ոչ միայն չի փոխում ամբողջ տպավորությունը, այլև բոլորովին նոր բացատրություն է տալիս կաթոլիկ բովանդակությանը:

Ինչո՞վ բացատրել, որ նկարիչ Մոմիկի մոտ Հովսեփը այդպես ընդգծված է և հատուկ առանձնացված է մանրանկարի մյուս կերպարների ու առարկաների մեջ: Թվում է, թե Մոմիկն էլ պետք է նկարի «Հերոս» զարձներ ուստամության գլխավոր գործող գեմքին՝ ծննդյան Տիրամորը կամ թե նորածին Հիսուսին, և ոչ թե Հովսեփին: Կարծում ենք, որ այդ առանց նպատակի չի արված նկարչի կողմից: Հավանական է, այդ աշխատանքը կատարելիս նկարից նկատի է ունեցել հրեաների խոսքերը Հովհաննու ավետարանից՝ «Հիսուսը չէ՝ արդյոք սա, Հովսեփի որդին, որի հորը ու մորը մենք զիտենք» (գլ. Զ, 42. ընդգծումը մերն է — Ա. Ա.): Մոմիկը Հովսեփի կերպարն առանձնացնելով, ցանկացել է բացահայտորեն ակնարկել այն, որի մասին ավելի զգուշավոր կերպով ակնարկում է Գլածորյան զպրոցի մի ուրիշ նշանավոր ներկայացուցիչ՝ Թորոս Տարոնացի¹⁶ նկարիչը, որ նորածին Հիսուսը ունեցել է իր ծնող-



Նկար 2.— Քրիստոսի Ծննդյան

16. Տե՛ս «Հինգ հայկական մանրանկարչություն» ալբոմը, Երևան, 1952 թ.:



Նկար 3. — Տյառներնդառաշ

ները, և դրանով ավելի ընդգծելով, որ նա ոչ միայն մորից է՝ Մարիամից, այլև Հորից՝ Հովհաննից: Կարելի է մտածել, որ նկարիչը ցանկացել է որոշակի ռեալ բացատրություն և ինքնուրուց մեկնություն տալ ավեստարանական նկարագրության, պատումին:

Այս մանրանկարի գումավոր ելեկը (երկնագույն, մանիշակագույն, կանաչ և դարչնագույն) արտահայտված է պայծառ երանդաբրով, օգտագործված է նաև ոսկի: Պետք է ընդգծել, որ պայծառ գումարի ներկազնակը ընդհանրապես հատուկ է նկարիչ Մոմիկին: Մոմիկն օգտագործել է նաև բեկիլա, որի օգնությամբ նա ընդգծել է ծալքերը կերպարների վրա և արտահայտի դարձրել դրդանկարները:

Մոմիկը շատ բավ էր տիբրապետում վրձին: Նրա վարպետությունը հատկապես արտահայտվում էր կերպարների ծավալի և նյութի ֆակտուրայի փոխանցման մեջ: Մաֆորիի ծալքերը Մարիամի վրա նա կատարել է այնպիսի վարպետությամբ, որ զգացվում է նկարի ճշտությունը պիգմենտի մարզակագմական կառուցվածքի տեսակետից: Նրանք

բնական են և ոչ թե ոճավորված, խելպես ուրիշ այլ մանրանկարիչների մոտ, որոնք հասցրնում էին օրնամենտալ զարդի: Այդ տեսարանը խոսում է վարպետի մեծ ինքնատիպության մասին, որը կարողին չէր համեմատ ավանդական սովորության, այլ բազորությն մի այլ նոր, ինքնուրուց մեկնություն էր ապահով ինչպես այլ, նույնպես և այլ սովորությունների:

«Տյառներնդառաշ» (1 շ. 3ր, նկար 3): Թեև այդ տեսարանը կապված է Ավետարանի հետ, բայց նկարիչ Մոմիկը այն ինքնուրուց վերամշակության է ննիմարդկել Հիշյալ տեսարանը լուծված է Հակիմը, այնազ աբրված են միայն զիսավոր զնո՞րերը՝ Միմինը, ունաուկ Հիսուսը և Նրա ծնողները: Մյուս զեմքերը, այդ թիւմ և Աննա մարզարձն, որու ոչ մեկնիր ի Տաճարէն» (Աւետարան բառ Դուկասու, թ. 37), Մոմիկի մոտ բացակայում է:

Դուկասի ավետարանը, որտեղ միայն նկարագրում է այս տեսարանը, պատմում է, «Եւ իրեւ ածին ծեռդին զմանուկն Յիուան՝ սովոր նոցա սովորութեան օրինաց ի վերայ նորա» (Դուկաս, թ. 27. բնդգծումը մերն է — Ա. Ա.): Նկարիչը որոշ չափով շեղվում է ավետարանի բովանդակությունից: Նկարչի կողմից ներկայացված է ոչ թե ծիսակատարության բուն արարողությունը,



Այսեմա 2. — «Տյառներնդառաշ» մանրանկարի կոմպոզիցիոն կենտրոնը և կենտրոնական ուղղաձիգը

այլ կարծես թե պատկերացված է շարականի Հետևյալ տողը՝ «խալատայր ալեօնն ծերունին աստուածորդուովն ի գիրկս իւրա»¹⁷; Եվ իրոք Սիմեոնը՝ «արդար և երկիւղած», բերելով զույգ ձեռքերով Մանկանը, զուրս է դալիս շեմք, իրեն սպասող ծնողների՝ Մարիամին և Հովսեփի առաջ: Տաճարի լայն աստիճանի վրա կանգնած Մարիամը խոնարհվելով Սիմեոնին առաջ, շտապում է մաֆորիի տակ ծածկված մեկնած ձեռքերով ընդունել իր Մանկանը, Սիմեոնին փոքր ինչ մեծ զգի թւրությունը և մարմնին կեցվածքը թեթև հուզմունք է արտահայտում, նույնիսկ որոշ երկուող Մանկան կյանքի նկատմամբ: Մանկան դեմքի արտահայտության վրա զրոշմված է անկեղծությունը, հավատարմությունը: Մարիամը ներկայացված է մեզմ և նուրբ շարժումներով: Համեմատաբար անհաջող է Հովսեփի կերպարանը, որը բերում է զոյդ աղավնիներ: Այդ բոլորը պատկերված է Տաճարի ֆոնի վրա, որի մի մասը՝ իրկու գմբեթներով բնինում է շատ խորք, հետին շարքը՝ շնորհիվ խիստ առաջ բնիկած մոնումենտալ ձևականացնելու մասի: Վերջինս բաղկացած է երկու կլոր մարմարի սյուներից և կամարից, որոնք ձևավորում են Տաճարի մուտքը: Մուտքի հետ բաշխած վարագույրը, մութ ֆոնի շնորհիվ բնդգծված Տաճարի խորությունը ուժեղացնում են տարածականության տպագրությունը և շնորհիվ այդ բոլորի զգացմունքը: Տաճարի շնորհին հայտնաված ալեւոր ծերունու կերպարանը շարժումը:

Նկարիչը հրաշալի լուծել է նկարի գաղաթնակետը՝ Մանկան հանձնումը Մորը, տեսողական կենացրուն և հանդիսանում է Մանուկ Հիսուսը (տե՛ս սխեմա 2):

«Քրիստոսի մկրտությունը» (էջ 4ա) մասնակարի պատկերացրությունը որոշակիորեն ենում է ասորական օրինակից, որտեղ Ս. Հոգին աղավնու կերպարանով իշնում է Փրկչի զլսին երկնային զրերումը¹⁸:

Այս տեսաբանի հորինվածքը նույն հիմքերի վրա է կառուցված, ինչ որ վերը բնիկած մասնակարներում («Ավետարան» և «Քրիստոսի Շնունդը»): Եթի այդ տեսաբանները հատենք անկյունագծերով, պարզ կերևա, որ նրանք բաղկացած են 4 մասերից: Մակայն շնայած այսպիսի բաժանումներին, այդ մասերից ամեն մեկը չի դիտվում անջատաբար, այլ

17. «Եաբական հոգեոր երգոց Սուրբ և Ռազմական եկեղեցւոյ Հայաստանեաց», Ս. Էջմիածին, 1861 թ., էջ 68:

18.Տե՛ս Հ. Պ. Կոնդակով, «Արքունական պատմությունների պատմությունների աշխարհագույն պատմությունները», ՍՊԲ, 1904 թ., ստր. 40.



Սխեմա 3.— «Քրիստոսի մկրտությունը մանրանկարի կառուցման, կոմպոզիցիոն կենտրոնի և կենտրոնական ուղղաձգի սխեման»

ավաստակշուելով մեկը մյուսին սերտութեն կապվում են իրար հետ: Այդ շորս մասնաւոր միացնող հանգույցը հանդիսանում է իրուղության կիզակեար, «Մկրտության» մեջ այդ կիզակեար հենց մկրտության արարողությունն է, այսինքն՝ Հովհաննես Մկրտչի օրնող ձեռքը և Քրիստոսի զլուկը (տե՛ս սխեմա 3), «Ավետարան» մեջ՝ հրեշտակից Մարիամին անցնող անտեսանելի ավետման լույրը, իսկ «Շնունդը» մեջ՝ Հովսեփի կերպարանը, ինքը՝ «Հայունդի» մեջ՝ Հովսեփի կերպարանը:

Հորինվածքային միասնությունից բացի, հշյալ մանրանկարներում ցույց է տրված, միևնույն առարկաների ուրվագծերի կրկնությամբ (Հորդանան գետի ջրերը, աղբյուրը և քարայրը), վարպետի զեղարվեստական ինքնուրույն մաներան, որն արտահայտվում է հենց նկարչության բան ոմքի մեջ: Նրա զեղանկարչության պատճենավորումը, որը շատ բանով հիշեցնում է որմանկարչությունը, մարդկացին կերպարանքներին տալիս է ծավալուն բնույթի և ընկալվում է նյութականապես: Հարկավոր է բնդգծել, որ Մոմիկի այսպիս կոչված որմանկարչական մանրանկարներում երեսում է ձևի և ծավալի դրսեորման ձգուում:

(Հարունակելի)